

# ՔԱՐԱԳԼՈՒԽ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Մանվել Աբրահամյան  
Հեռախոս՝ +374.94.989950

Վարդենիսի լեռնաշղթայի հարավային լաջին երեք կողմից բլուրներով շրջապատված գողտրիկ մի վայրում է գտնվում նախկին Եղեգնաձորի շրջանի, այժմ Վայոց ձորի մարզի Քարագլուխ գյուղը: Քարագլուխ գյուղը գտնվում է Եղեգնաձոր քաղաքից ուղիղ գծով 15,9 կմ հյուսիս- արևմուտք: Ծովի մակերևույթից բարձր է 1630 - 1675 մետր:

Գյուղում և նրա շրջապատում պահպանվել են V - XVII դարերի գյուղատեղիներ, 13-րդ դարից՝ Սուրբ Պողոս եկեղեցին, մատուռներ 7-14-րդ դարերից պահպանված խաչքարերով, գերեզմանոց, առանձին խաչքարերը, որոնցից մեկն էլ հենց գյուղ մուտք գործողները կարող են տեսնել, որը զանգվածեղ Քարագլխից անսովոր հակված՝ ասես քարեղեն խոնարհումով ողջունում է գյուղի հյուրերին:

Գյուղամիջում մինչ այսօր կանգուն է Սուրբ Խաչ եկեղեցին, որի որմերում առկա ավելի հին շինությանը պատկանող ճարտարապետական բեկորները հուշում են, որ այն հիմնվել է թերևս վերջինիս կառուցման պահին արդեն ավերված եկեղեցու տեղում: Ուշադրություն է գրավում հին եկեղեցու գեղաքանդակ և խաչազարդ բարավորը, որը, որպես հնավանդ հիշատակ, ագուցվել է նորաշեն եկեղեցու արևմտյան ճակատում: Նոր եկեղեցու կառուցման մասին շինարարները որևէ վկայություն չեն թողել: Վերակառուցված Սուրբ Խաչ եկեղեցու օրհնության կարգը կատարվել է 2021թվականի օգոստոսի 17-ին, Վայոց ձորի թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանի ձեռամբ:

Գյուղից 1 կմ հյուսիս՝ հարավահայաց լեռնաձյուղի ուստին է գտնվում Թուխ մանուկ վանքը: Վանական համալիրի ավերակներն ու շուրջբոլորը տարածված գերեզմանոցում պահպանված հուշարձանները վկայում են, որ հնավայրը գոյություն է ունեցել առնվազն վաղ միջնադարից և իր նշանակությանը ծառայել մինչև շահաբասյան բռնազաղթը: 1876 թվականին հնավայրի մի այցելու նշել է.

<Բարձրավանդակում կա մի եկեղեցու ավերակ՝ երեք սեղանով: Քարագլուխցիները տապանաքարերով և հասարակ քարերով սեղանների վրա մի փոքրիկ տնակ են շինել, գլուխը ծածկել փայտով, դարձրել են ուխտատեղի և մկրտել են Թուխ մանուկ կոչումով: Պատերի մեջի երկու քարերի կիսատ պռատ արձանագրությունը ցույց է տալիս, որ դրանք բերված են այլ շինությունից: Սեղանի առաջ երկու կարգով շարված են 16 հատ տապանաքարեր, որոնցից միայն մեկն ունի հետևյալ արձանագրությունը. Այս է հանգիստ պարոն Գրիգորի որդույ Դամուրդաշի, յորժամ հասաւ վախճան իմ եղայ ի դուռն տաճարիս: Ով կարդէք յիշեցէք ի Քրիստոս և Քրիստոս զձեզ յիշէ ի կեանս, թ. ՋՁԲ (1533)>:

Գյուղի բնակիչների նախնիները 1828 թվականին գաղթել են Խոյ և Մալմաստ գավառներից: Հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և այգեգործությամբ:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, նախակրթարան, գրադարան, մշակույթի տուն, բուժկետ:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Քարագլուխ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 25 հուշարձան: